<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ>> ՀԿ

Հետազոտական աշխատանք ՆԶՊ առարակայից

Թեմա. **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Ուսուցիչ՝ Սամվել Մելիքյան, Մ.Իշխանի անվան թիվ 5 հիմնական դպրոց

Ղեկավար՝ էլլադա Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Ներածություն

Սույն հետազոտական ուսումնասիրությունը կատարվել է համաձայն ուսուցիչների վերապատրաստման ԿԱՍ-ի ծրագրի և թեմայի ընտրությունը, եղել է կամավոր՝ ըստ առաջարկված թեմաների ցանկի, որոնք մեր կարծիքով, հաստատվել են ԿԳՄՍ նախարարարության կողմից: Լիովին համաձայն չլինելով թեմաների ցանկի հետ, առավել ևս ի նկատի ունենալով 44-օրյա պատերազմի մեզ համար անդառնալի ցավոտ հետևանքները՝ կցանկանայինք նշել, որ չգիտես ում ,,թեթև,, ձեռքով ցանկից հանվել է ամենակարևոր թեման՝ ,,Ռազմական տեղագրություն,,: Չէ որ 3 տարի առաջ մենք բոլորս ականատեսն էինք մեր զինվորների, այն էլ՝ հարյուրավոր, գերի ընկնելուն կամ դեգերումներին: Որոնք մի քանի օր ,,թափառելով,, անտառներում և սովի մատնված, մի կերպ դուրս են եկել շրջապատման մեջ հայտնվելուց և հասել մեր դիրքերը: Կամ ինչպես 100-ից ավելի զինվոր գերի են ընկել, քանզի չգիտեին որ Մայր Արաքս գետը Հայաստանից է գալիս ու հոսում դեպի հարևան երկիր, ու գնում էին գետի հոսանքն ի վար, ոչ թե վեր: Այսինքն, նրանք չգիտեին տեղանքում կողմնորոշվել, քարտեզ չգիտեին, հյուսիս-հարավ, ,,մերոնց կողմ-ձերոնց կողմ,, չգիտեին: Այն արդյունքը, որ մենք ունեցանք, դեռ շատերին երազներում կգա, որպես սարսափելի իրականություն, որից հնարավոր էր խուսափել՝ դպրոցում պատշաճ մակարդակի կրթություն ստանալու շնորհիվ: Նույնը կարելի է ասել նաև այդ ցանկում բնական կամ տեխնածին աղետների թեմայի բացակայության մասին, որոնց կարևորությունը մեր առօրյա կյանքում դժվար է գերագնահատել: Հեռուստատեսությունն ու մեդիա դաշտը ամեն օր ազդարարում են երկրաշարժերի, վարարումների, հորդառատ անձրևների, ամբարտակների փլուզումների, քիմիական նյութեր տեղափոխող գնացքների, անապատներում տեղող ձյան ու անձրևների, փլուզումների ու սելավների մասին, պայթող տոնավաճառներում զոհվող մարդկանց, նաև երեխաների, մասին, իսկ դա, անհասկանալիորեն մեզ համար, ավելի պակաս կարևոր ուսումնասիրման-հետազոտության թեմա է, քան 1946թ. Կալաշնիկովի ավտոմատի ոչ լրիվ քանդել և հավաքելը, որն իրականում գրեթե պետք չեկավ մեր զինվորներին 44-օրյա պատերազմի ժամանակ, որովհետև հիմա կան պատերազմի ելքը որոշող այլ զինատեսակներ, և կարևորվում է զինվորի ընդունակությունները գործելու ծայրահեղ դժվարին իրավիճակներում, քանզի մեծ է մարդու վերապրելու պարագան, իսկ դրա համար շատ մեծ նշանակություն ունի հմտությունը, գիտելիքը, փորձը:

Անդրադառնալով մեր ընտրած թեմային՝ ասենք, որ այն բաժանել ենք երեք մասի. ա/ *ներածություն կամ ընդհանուր դրույթներ, բ/ թեմայի հիմնական դրույթները, էությունը , կարևորությունը՝ ՆՀՊ առարկայի դասընթացում, դրա*

առանձնահատկությունները, գ/ եզրակացություններ և առաջարկություններ , և օգտագործված գրականության և մեդիա-աղբյուրների ցանկը:

Սույն թեմայի ուսուցումը ընդգրկված է հանրակրթական դպրոցի ՆԶՊ առարկայի ծրագրում և պարտադիր է դասվանդման 1 դասի ընթացքում: ՞8-9 դասարանների ՆԶՊ առարկայի ուսուցչի ձեռնարկում՞ /Երևան, 2014թ./, ասվում է.

,,Յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտենա և անշեղորեն պահպանի Միջազգային մարդասիրական իրավունքի / ՄՄԻ / նորմերը: Իսկ զինղեկը պարտավոր է մատչելի լեզվով աշակերտներին բացատրել այն հիմնական գաղափարներն ու դրույթները, որոնք ընդգրկված են ՄՄԻ սահմանումներում ու նորմերում, և, որն ամենից կարևորն է մեր կարծիքով, օրինակների միջոցով բացատրելով դրանք, կարողանա աշակերտին ապացուցել դրանց կարևորությունը, որը, հատկապես մեր օրերում, գրեթե անիրականալի է դարձել, քանզի աշակերտները ևս՝ մեզ հետ միասին, գրեթե ամեն օր ականատես են լինում աղաղակող իրականությանը, երբ ոտնահարվում են ՄՄԻ նորմերը, չեն իրականանում միջազգային բարձր ատյանների որոշումները:Ուսուցիչը պետք է շարունակի ուսուցանել, որ այդ նորմերը համամարդկային են և պարտադիր կիրառման բոլոր պետությունների կողմից: Փակուղային իրավիճակ է: Մեր հարևանը միշտ խախտում է այդ նորմերը և մնում է անպատիժ: Ինչի համար են պետք, ուրեմն, այդ նորմերն ու դրույթները: Դրանք ուղղակի անօգուտ են, քանզի ցանկալի արդյունք չեն տալիս: Սա խնդիր է, որ կարող է հոգեբանական ազդեցություն ունենալ աշակերտի վրա, և նա իրեն կարող է իրավունք վերապահել, որ երբ կարող է պատեհ առիթ կամ իրավիճակ ստեղծվի՝ նա կգործի այնպես, ինչպես պահը կթելադրի իրեն՝ ,, ակն ընդ ական,, սկզբունքին համապատասխան: Այս հարցը չունի միանշանակ պատասխան: Դա հասկանալի է: Անպատասխան է մնում նաև այդ որո-շումների ընդունման անհրաժեշտությունը: Դրանք իրենց հիմնական մասով անտեսվում են և պարբերաբար: Եվ տարբեր երկրների կողմից: ՄՄԻ նորմերի ոտնահարման դատապարտումները, մտահոգությունները միջազգային ամենատարբեր բարձր ամբիոններից մնում են սոսկ այդպիսիք և անհետևանք:Փակուղային իրավիճակ է գոյանում, քանզի մենք աշակերտին պարտադրում ենք սովորել և իմանալ այդ սահմանումներն և դրույթները: ԱՄՆ-ն, որն աշխարհի թիվ մեկ երկիրն է մարդու իրավունքների պաշտպանության հարցերում, ՝ Կուբայից զավթված Գուանտանամո թերակղզում ավելի քան 60 տարի ստեղծել և պահպանում է բանտ, որտեղ չեն գործում ոչ մի իրավական նորմեր, որ հարիր են այդ երկրին: Այստեղ գտնվում են բանտարկյալներ, որոնց մեղքը ապացուցված չէ դատարանի որոշմամբ և նրանց ճագատագրի մասին ոչինչ հայտնի չէ:

2. *ՄՄԻ հիմունքները և ձևավորումը.*

Մարդկային հասարակությունն իր բազմադարյան պատմությունը կերտել է բազմաթիվ պատերազմների միջոցով՝ որպես այդ պատմության անբաժանելի մի մասի և զարգացման բաղկացուցիչ գործոնի:Այդ պատերազմներն երբեմն եղել են դաժան սպանդներ, երբեմն՝ ոչ: Եղել են պատերազմներ, երբ հաղթող կողմը խնայում էր պարտվող կողմի կանանց ու երեխաներին, ծերերին ու թույլերին: Հայոց պատմության մեջ ևս կան հիշատակումներ այդ մասին: Հիշենք Սասունցի Դավթին: Մելիքին հաղթելուց հետո, նա դիմում է Մսրա զորքին, որպեսզի նրանք հանգիստ լինեն, հեռանան ու վերադառնան հողը Մսրա, քանզի նրանք ռանչպար մարդիկ են: Կամ Մուշեղ Մամիկոնյանը, իր վեհանձն վարքով, երբ Ձիրավի ճակատամարում՝ պարսիկներին հաղթելուց հետո /մ.թ. 371թ./. նրանց արքային է վերադարձնում իր կանանոցը: Նման դեքեր նկարագրված են նաև Հին Կտակարանում, հին հնդկական ավանդապատումներում և այլն: Չմանրամասնելով դրանք, ասենք միայն, որ դրանց բոլորի հիմքում ընկած են պատերազմական գործողությունները և դրանց մասնակիցների՝ պատերազմող կողմերի վերաբերմունքը այն անձանց նկատմամբ, որոնք անմիջական մասնակցություն չեն ունեցել այդ գործողություններին կամ եղել են, իսկ այժմ՝ ոչ, վիրավորվել են, գերևարվել, դարձել ,, դիտորդ,,:

Արդեն 19-րդ դարում, 1820թ., հայտնի է դառնում մարդասիրական իրավունքի վերաբերյալ առաջին փաստը: Իսպանական գաղութային բանակի և իր անկախության համար մարտնչող Կոլումբիայի զինված ուժերի միջև վենեսուելական Սանտա-Աննա դե Տրուխիլիո քաղաքում պայմանագիր է ստորագրվում, որտեղ հարգվում էին գերիների, վիրավորների իրավունքները: 19-րդ դարի 60-ական թվականներից սկսած նման դեպքեր ավելի հաճախ սկսեցին հանդիպել, որն էլ իրականում վերածվեց պատերազմ վարելու որոշակի միջազգային նորմերի մշակման և ստեղծման, որոնք էլ հետագայում հայտնի դարձան որպես ՞Զինված ընդհարումների իրավունք՞, ՞Պատերազմի իրավունք՞, ՞Պատերազմի իրավունքներ և սովորույթներ՞ և այլ բազմաթիվ անվանումներով:

ՄՄԻ կամ Զինված ընդհարումների իրավունքը այսօրվա Միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասերից մեկն է, որը կանոնակարգում է թեթևացնել մարդկային տառապանքները, պատերազմի պատճառած վնասները և հետևանքները, մարդու արժանապատիվ, ազատ և արժանավայել ապրելու իրավունքը և ձգտումները /Վիկիպեդիա/: Դրա համար էլ այն կոչվում է մարդասիրական:

---Ժնևյան կոնվենցիաներ: Այս կոնվենցիաների զարգացումը ընթացել է1863-ից մինչեվ 1949 թվականներն ընկած ժամանակահատվածում՝ աստիճանաբար: Ուշադրության կենտրոնում է եղել խաղաղ բնակչության և այն անձանց իրավունքների պաշտպանությունը, ովքեր այլևս չեն մասնակցում զինված հակամարտությանը: Մեր առջև խնդիր չենք դրել մանրամասնել այդ կոնվեցիաների ընդունման պատմությունը և առանձնացնել որոշ անձանց, ովքեր ամենակարևոր ներդրումներն ունեն և որոնց ջանքերով են կյանքի կոչվել այդ կոնվենցիաների հիմնական դրույթներն ու որոշումները, կերտել պատմությունը: Մեզ համար կարևոր են այս դրույթները այնքանով, որ դրանք վերաբերվում են գործող բանակի / նույնը վերաբերվում է նաև ծովային զինված ուժերին / վիրավորներին, հիվանդներին, ինչպես նաև քաղաքացիական բնակչությանը, այդ թվում և օկուպացված /գրավյալ/ տարածքներում: Վերջին դրութի հետ կապված, սեփական փորձից, կուզենայի հիշել 1992-93թթ. ձմեռը, երբ Քարվաճառի շրջանի ազատագրման ժամանակ, տեղական բնակչության մի մասը, հիմնականում հիվանդներ ու մեծահասակներ, ծերեր, ավելի քան 1 ամիս ապրեցին մեզ հետ, մեր հետ կիսելով մեր սնունդը, ցուրտը և մնացած դժվարությունները, /նրանք չէին հասցրել տարհանվել մարտերից առաջ/, սովորական իրենց առօրյա կյանքով ապրեցին ավելի քան 1 ամիս, մինչ Կարմիր Խաչի օգնությամբ հեռացան պատերազմական գործողությունների տարածքից: ՄՄԻ նորմերը մեզ գրեթե անծանոթ էին, մենք գիտեինք միայն քրիստոնեական մարդասիրության ու բարության նորմերը: Նույնը ասել մեր հարևան պետության զինուժի մասին՝ անհնար է: Նրանց վայրագությունների մասին այնքան է գրվել ու մնացել անպատիժ, որ խոսելն անգամ տհաճ է:

Շարունակելով Ժնևի կոնվենցիաների մասին մեր միտքը, ցանկանում ենք անպայման նշել՝ մեր կարծիքով հույժ կարևոր մի փաստ: Այդ կոնվենցիաների մասնակիցներ են հանդիսանում 194 պետություններ: Մասնակիցներ չեն հանդիսանում այնպիսի քաղաքական և ռազմական հզորություններ ունեցող երկրներ, ինչպիսիք են Իսրայելը, Հնդկաստանը, Պակիստանը և ԱՄՆ: Այս պետությունները ունեն միջուկային զենք և ավելին մանրամասնել այս կապակցությամբ՝ տեղին չէ և այլ ուսումնասիրության թեմա է:

---Հաագայի կոնվենցիաները: Այս կոնվենցիաները հիմնականում վերաբերվում են պատերազմի պատշաճ վարման սկզբունքներին, ռազմական նպատակներին, մշակութային արժեքների պաշտպանությանը, որոնք նույնպես ունեն ընդունման և հաստատման երկար տարիների պատմություն և թվագրվում են 1899,1907,1954,1977, 2005 թվականներով: Եթե համեմատելու լինենք Ժնևյան և Հաագայի կոնվենցիաների

սկզբունքները, կարելի է ասել, որ դրանք միմյանց հետ զուգորդելով, մենք ստանում ենք հետևյալ կանոնակարգումները.

- մարտական գործողությունների վարման որոշակի սահմանափակումներ.
- վիրավորների և գերիների կարգավիճակ .
- քաղաքացիական բնակչության իրավունքների հարգում.
- բժշկական և հոգևոր դասի ներկայացուցիչների իրավունքների հարգում:

ՄՄԻ կարևոր նվաճումներից մեկն է համարվում ,,Միջազգային Կարմիր խաչ,, հասարակական կազմակերպության ստեղծումը 1863 թվականին, հունիսի 24-ին: Այս մարդասիրական կազմակերպությունը 3 անգամ / 1917,1944, 1963թթ./ արժանացել է Նոբելյան մրցանակի և միշտ հավատարիմ մնացել այն մարդասիրական սկզբունքներին, որ որդեգրել է և, մեր կարծիքով, մնում է հավատարիմ դրանց, որքան հնարավորություն ունի: Այս միջազգային լայն հնարավորություններով օժտված միջազգայյին կազմակերպությունը իր ուժերի սահմաններում առաջին աշխարհամարտի պայմաններում իր կարևոր դերն է ունեցել նաև հայ ժողովրդի կյանքում, որն անտեսել կամ մոռացության մատնել մենք չենք կարող: Հայերի ցեղասպանության կազմակերպումից հետո Օսմանյան Թուրքիայում գործող ԿԽ բոլոր անդամները լծվեցին հայ երեխաների ու կանանց փրկության գործին: Իր առաքելությանը հավատարիմ, Կարմիր Խաչը հնարարավորինս ամեն արեց հայ մանուկներին, որոնք վերապրել էին ցեղասպանությունը, կարողանան ողջ մնալ և շարունակեն ապրել: Դա մեծագույնս նպաստեց հայ ժողովրդի գենոֆոնդի պահպանմանը, իսկ թե ինչպիսի մեծագույն հայեր նրանցից շատերը դարձան՝ մեր կարծիքով մի շատ լուրջ և կարևոր ուսումնասիրության թեմա է:

Կարմիր Խաչը այժմ էլ նույն եռանդով շարունակում է իր առաքելությունը, ինչպես նախանշված է նրա ,,կանոնագրքում,,: Դեռևս 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո նա Հայաստան եկավ, իսկ պաշտոնապես հաստատվել է ՀՀ-ում 1992 թվականին և այնուհետ, կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ շարունակաում է իր մարդասիրական գործունեությունը և բազմաթիվ մեր հայրենակիցներ պարտական են իրենց գոյությամբ այս կազմակերպությանը: Սա անհերքելի փաստ է: Այդ առաքելությունը նրանք կատարում են ցայսօր, երբ գրեթե 10 ամիս փակ է Լաչինի մարդասիրական միջանցքը: Իսկ նրանց ճիգերը անընդհատ շարունակվում եմ:

Նորագույն պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ ՝ կապված ցեղասպանության հետ, որին տրվել է ,,գենոցիդ,, որակավորումը, նախադեպը

համարելով հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: ՄՄԻ իրավունք-ների խախտման նորագույն օրինակներն էլ շատ բազմաթիվ են և լայնատարած՝ աշ-խարհագրական տեսակետից: Դեռևս Ադոլֆ Հիտլերը, է1933 թ. Գերմանիայում գալով իշխանության և սկսելով հրեա բնակչության ոչնչացումը իր երկրում, արդարացնելով իր քայլերը, համոզում էր բոլորին, որ, հիմա «ոչ ոք չի հիշում հայերի սպանդը Թուրքիայում»: Իսկ անցել էր ընդամենը 18 տարի: Մարդկությունը մոռացել էր այդ մասին և դա դարձավ նախադեպ, մեր կարծիքով, որ նման երևութները ունենան շարունակական բնույթ և հասնեն մինչ այսօր: Գերմանիայում և այլ երկրներում 5 մլն.-ից ավելի հրեաներ վերացվեցին, ոչնչացվեցին և նրանց ունեցվածքը մնաց որպես պետական, թեև սա երևի միակ դեպքն է, երբ հետագայում գերմանական պետությունը ճանաչեց իր նախորդ կառավարությունների ընթացքում թույլ տրված սխալները, փոխհատուցելով վնասները մասնավոր անձանց և դա դարձավ Իսրայել պետության զարգացման ու բարգավաճման հիմնական խթաններից մեկը, որը մինչ հիմա շարունակում է մնալ պատերազմական իրավիճակում գրեթե ողջ արաբական աշխարհի հետ:,,Գենոցիդ,, բառի լիակատար իմաստին համապատասխան անդառնալի երևույթներ իրականացան Կամբոջայում / 2 մլն-ից ավելի մարդ ոչնչացվեց քաղաքացիական պատերազմի ժամանակ, երբ երկրում իշխում էին Պոլ Պոտն ու Յենգ Սարին/ 20-րդ դարի 60-ական թվականներին/: Դրանք մնացին անհետևանք: Ազգամիջյան՝ կրոնական հիմքի վրա մարդկային հազարավոր կյանքեր վերացան Ուգանդայում՝ էթնիկ հողի վրա, նախկին Բիրմայում /Մյանմա/ ,որոնց հիմքում ընկած էր դավանանքը: Եվ միայն Սուդանում, ՄԱԿ-ի հովանու ներքո, հնարավոր եղավ իրականացնել երկու ,,հակամարտող,, կողմերի միջև հաշտության եզրեր գտնել ընտրությունների միջոցով, և քրիստոնյա Հարավային Սուդանը դարձավ անկախ պետություն: Անկախացավ Ինդոնեզիայից և դարձավ պետություն Պապուա-Գվինեան: Եվ այս բոլորը մեր օրերում, 20 րդ վերջին-21-րդ դարում: Սակայն կան նորմեր, որոնք չեն ,,տարածվում՝ ուրիշ երկրների ու տարածքների վրա, որոնք գտնվում են Եվրոպային մոտիկ երկրների վրա: Դրա բնորոշ օրինակ է հանդիսանում Հարավսլավիա պետության վերացումը Եվրոպայում, որի փոխարեն քարտեզի վրա առաջացան 7 նոր պետություններ, որոնց հիմքում ընկած էր ազգերի ինքնորոշման իրավունքը և տարածքային ամբողջականությունը: Սակայն, դա պարզապես չգործեց Լեռնային Ղարաբաղի պարագայում, թեև ԼՂՀ-ն անցել էր այն բոլոր անհրաժեշտ գործընթացները, որ անհրաժեշտ է սեփական անկախությունը հռչակելու համար: Սա է այն հիմնական փակուղի տանող ճանապարհը, երբ ուսուցիչը հասկանալի բառերով չի կարողանում աշակերտին բացատրել ՄՄԻ գործելու կամ չգործելու իրականությունը: Միջազգային Կարմիր Խաչը արդեն գրեթե 10 ամիս չի կարողանում մարդասիրական օգնություն տրամադրել ԼՂՀ շրջափակման մեջ գտնվող և

հումանիտար աղետի մեջ գտնվող բնակչությանը և միայն ուժերի ծայրագույն լարումով մի կերպ կարողանում է դուրս բերել ծայրահեղ հիվանդներին: Օգնության ճանապարհը փակ է: Նման իրավիճակում անկախություն ստացավ Կոսովոն, բայց դա Եվրոպայի կենտրոնում էր, իսկ ԼՂՆ այնքան հեռու է Բրյուսելից::

Միջազգային Կարմիր Խաչի՝ որպես կազմակերպության, անդամագրվել են նաև իսլամական պետություններ՝1929 թ., իրենց խորհրդանիշ ընտրելով Կարմիր Մահիկը, որոնք արաբական 32 պետություններ էին: Պետք է ասել, որ որպես պաշտոնական խորհրդանիշ է ընդունված նաև Իսրայելի Դավիթի Կարմիր Աստղը: Այն գոյություն ուներ 1930 թվականից , սակայն ԿԽՄԿ-ն որպես կազմակերպության լիիրավ անդամ իր շարքերում ընդունեց այն 2006թ.:

ՄՄԻ կարևոր առաքելություններից է խղճի ազատության պահպանումը: Դա իր մեջ ներառում է հոգևոր դասի անձանց իրավունքների պահպանումը պատերազմական գործողությունների տարածման շրջաններում: Խոսքը վերաբերվում է ոչ միայն քաղաքացիական հոգևորականներին, այլև այս կամ այն զորամասերին մշտապես կամ ժամանակավորապես կցված կապելաններին: Նրանց իրավունքները հավասարվում են բժշկական, սանիտարական անձնակազմի իրավունքներին, հիվանդների, գերիների և այլոց: Այս հանգամանքը շատ է կարևորվում հատկապես Բիրմայի 2007 թ. դեպքերից հետո, երբ գլխավորապես բուդդիզմ դավանող երկրում ոտնահարվեցին մահմեդականների իրավունքները և հարյուր հազարից ավելի մարդիկ փախան Բանգլադեշ, իսկ հազարավորները ոչնչացվեցին: Մեր հարևան պետությունը ևս էթնիկ զտումներ է կազմակերպել միշտ՝ հոգևոր հողի վրա և շարունակում է դա անել, միջազգային հանրության դատապարտումների ներքո: Սա է այն հիմնական ու խոցելի հարցերից մեկը, երբ ուսուցիչը աշակերտին ՄՄԻ բացատրելիս դեմ է առնում պատի, որի հաղթահարումը ուժերի մեծ լարում է պահանջում և տեսանելի անկարողության դրսևորում: ԿԽՄԿ ջանքերով է որ ամբողջ աշխարհում օգոստոսի 30-ը նշվում է որպես Անհայտ կորածների միջազգային օր: Այդպիսի մարդիկ շատ են աշխարհում և նրանց ընտանիքի անդամներին դա հույս է տալիս, որ միջազգային կազմակերպությունները դեռ շարունակում են իրենց ուժերը ներդնել այդ մարդկանց որոնման, հայտնաբերման և ընտանիքներին վերադարձնելու դժվարին գործում:

Կցանկանայինք անդրադառնալ ՄՄԻ մեջ ներառված ռազմական հանցագործություններին և ռազմական դատարանների / տրիբունալների/ գործունեությանը, որոնք իրենց կարևորագույն դերն են ունեցել ժամանակակից աշխարհի ներկա

միջպետական հարաբերությունների և երկրագնդի բնակչության այսօրվա իրավիճակի ու կացության հետ:

Ռազմական հանցագործությունները որակվում են որպես պատերազմ վարելու օրենքների և սովորույթների ընդունված նորմերի ծանր խախտումներ, ՄՄԻ ծանր և բացառիկ խախտումներ, որոնց իրականացման համար նախատեսված է անհատական պատասխանատվություն՝ ելնելով միջազգային իրավունքի դրույթներից: Այդ հանցագործությունների մանրամասն ցանկը ամրագրված է Հռոմի Միջազգային քրեական դատարանի կանոնագրքի / օրենսգրքի/ 8-րդ հոդվածում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ձևավորվեցին առաջին միջազգային տրիբունալները՝ Նյուրնբերգի /1945/ և Տոկիոյի /1946/: Դրանք գործում էին հաղթող տերությունների միջև նախապես, պատերազմի ավարտից առաջ, կնքված պայմանագրերի համաձայն և հիման վրա, և իրենց մեջ ներառում էին հանցագործությունների այնպիսի տեսակներ, որոնք որակվում էին որպես համայն մարդկության և աշխարհում համընդհանուր խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ: Օրինակ, զավթողական պատերազմ նախապատրաստելու, պլանավորելու և վարելու՝ ընդդեմ մարդկության /ոչնցացում, հարստահարում, կազմակերպված սպանդ, որը հետագայում հրեաների ջանքերով ստացավ Հոլոկոստ անվանումը/ և ռազմական հանցանքներ / գերիների ոչնչացում, տանջահարու/: Նյուրնբերգում ռազմական տրիբունալը քննեց 24 անձանց գործ, իսկ Տոկիոյում՝ 29:

1993 թվականին ՄԱԿ Անվտանգության խորհրդի թիվ 827 որոշմամբ ստեղծվեց Միջազգային Դատարան Հաագայում՝ նախկին Հարավսլավիայի հարցերով, որը աշխատեց մինչև 2017 թվականը:

1994 թվականին Միջազգային դատարան ստեղծվեց՝ նույնպես ՄԱԿ-ի որոշմամբ, Ռուանդայի հարցով, այն անձանց դատապարտելու համար, որոնք կազմակերպել էին ցեղասպանություն այդ երկրում, ինչի արդյունքում զոհվել էր ավելի քան 1 մլն մարդ /թութսի ազգության/: Դատարանը գտնվում էր հարևան Տանզանիա պետության տարածքում և գործեց մինչև 2015 թվականը:

Հռոմի ստատուտը / իրավունքը / ևս միջազգային քրեական դատարան է, որն ստեղծվել է 1996 թվականին և ուժի մեջ է մտել 2002 թվականից: Այն վավերացված է 123 երկրների կողմից : Հռոմի ստատուտը առայժմ չեն վավերացրել այնպիսի տերություններ, որպիսիք են ԱՄՆ, ՌԴ, Չինաստանը, Ուկրաինան, Հնդկաստանը և Իսրայելը / ՀՀ-ն ևս դեռևս այն չի վավերացրել, եթե վավերացրած լիներ, ապա պետք է Վ.Պուտինին ձերբակալելու որոշում կայացներ, քանզի այդպիսին է Հռոմի դատարանի 2023թ. կայացրած որոշումը/: Այս դատարանը 20-ից ավելի տարիների

ընթացքում մի շարք աղմկահարույց գործեր է քննել, որոնց արդյունքում պատժի են դատապարտվել նաև պետությունների առաջին դեմքեր:

Մեր կարծիքով ուշադրության է արժանի ՄՄԻ այնպիսի դրույթներից մեկը, ինչպիսին հանդիսանում է մասնավոր սեփականության իրավունքը հարգելը: Այսինքն այն անձանց սեփականությունը, որոնք պատերազմի ընթացքում հայտնվել են գրավյալ տարածքներում: Բազմաթիվ օրնակներ կան այս վերաբերյալ, երբ այդ ունեցվածքը թալանվել է, ոչնչացվել է,գրավյալ տարածքներից դուրս բերվել թալանի տեսքով: Մասնավոր ունեցվածքի զավթումը նույնպես անթույլատրելի է և պաշտ-պանված է 1949 թվականի Ժնևյան կոնվենցիայի 146-149 հոդվածներով՝ ,,Քաղաքա-ցիական բնակչության պաշտպանությունը պատերազմի ժամանակ,,: Այստեղ, կարելի է հիշել մի փաստ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից, երբ սեփականության իրավուքը կարևոր դեր է խաղացել ռազմական գործողության իրականաց-ման ընթացքում: 1944 թվականին, Բրիտանական ռազմաօդային ուժերի առջև խնդիր է դրվում ոչնչացնել Գերմանիայի տարածքում կարևոր նշանակության մի ռազմական օբյեկտ, որը քողարկված է ու լավ պաշտպանված անտառային շրջանում՝ Բավարիայում: Առաջադրանքը ստանալուց հետո, երբ օդանավի անձնակազմը պատրաստվում է թռչել հրամանը կատարելու, օդաչուներից մեկը հարցնում է հրամանատարին, ,,իսկ այդ անտառները պետական սեփանություն են, թե մասնավոր անձի,,: Նրան պատասխանում են, որ դրանք մասնավոր սեփականություն են և՝ եթե, հետագայում կարիք լինի, Բրիտանական կառավարությունը իր վրա կվերցնի պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված բոլոր խնդիրները: Սա խոսում է այն մասին, որ սեփականության իրավունքի անձեռնամխելիությունը և հարգումը գրեթե բոլոր երկրներում հաստատված իրականություն էր իրենց ներքին օրենքներով՝ մինչև միջազգային օրենսդրական որոշումների ընդունումը:

Մեր կարծիքով, ՄՄԻ նվիրված այս աշխատանքում, տեղին է անդրադառնալ հայկական արմատներով ,, Ավրորա,, միջազգային մարդասիրական մրցանակին, որի նպատակն է արժանին մատուցել մեր օրերի հերոսներին և գնահատել այն բացառիկ ազդեցությունը, որ ունենում է նրանց գործունեությունն այնտեղ, ուր անհրաժեշտ է առաջ մղել մարդու կյանքի պահպանման գործը և մարդասիրությունը: Այս մրցանակը շնորհվում է ամեն տարի, Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից, որպես երախտիքի արտահայտություն բոլոր նրանց, ովքեր փրկեցին իրենց: Այն հիմնադրվել է 2015 թվականին: Հիմնադիրներն են Վարդան Գրեգորյանը, որն իր մահկանացուն կնքեց 2021 թ. ապրիլին,Նուբար Աֆեյանը և Ռուբեն Վարդանյանը: Դափնեկիրը ստանում է 100 հազար ԱՄՆ դոլար , որպես մրցանակ իր կատարած աշխատանքի ու մարդասիրական գործունեության համար, ինչպես նաև 1 մլն դոլար՝ իրեն ոգեշնչող

կազմակերպության, հիմնարկությանը փոխանցելու համար, որպեսզի այդ առաքելությունը՝ մարդկանց փրկելու, ազատելու և օգնելու առաքելությունը լինի շարունակական: Մրցանակը անվանվել է Արշալույս Մարտիկյանի անունով, որը վերապրել է 1915 թվականի Հայոց Ցեղասպանություն Թուրքիայում և երկար դեգերումներից հետո հասել է ԱՄՆ և մի քանի տարի անց գրել է ,, Հոշոտված Հայաստան ,, գիրքը, որն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ և թարգմանվել աշխարհի տարբեր լեզուներով: Գրքի համար նա վերցրել է Ավրորա Մարդիգանյան անունը: Արշալույսը մահացել է 1993 թվականին, Կալիֆորնիայում: Ասենք նաև, որ այս մրցանակաբաշխության խորհրդի անդամներն են տարբեր երկրների նախկին խոշորագույն քաղաքական գործիչներ, գիտնականներ, իսկ պատվավոր նախագահն է աշխարհահռչակ հոլիվուդյան կինոաստղ Ջորջ Քլունին: ««Ավրորայի»» մասին նկարահանվել է վավերագրական ֆիլմ, որի ռեժիսորն է պատմաբան Էնթոնի Սլայդը: Ցավով ուզում ենք փաստել, որ աշխարհի սփյուռքահայերի միայն 41 տոկոսը գիտի Հայոց պատմություն /դա այդ ֆիլմի՝ մեր կարծիքով ամենացավոտ իրականության արտացոլումն է:

3. *Եզրակացություններ և առաջարկություններ*

Ամփոփելով ՄՄԻ մասին այս աշխատանքը, կցանկանայինք մի քանի խոսք ասել այս թեմայի հետ կապված խնդիրների և ընդհանրապես «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկայի դասավանդման մասին հանրակրթական դպրոցում: Թեման շատ արդիական է և շատ անհրաժեշտ աշակերտության համար, քանզի նրա հիմքում ընկած են ամենակարևոր մարդկային արժեքներ: Իսկ դպրոցի հիմնական նպատակն է դաստիարակել «մարդ» հասկացությանը բնորոշ քաղաքացիներ՝ նախևառաջ: Մեր օրերում այն իրականացնելը բարդ խնդիր է: Այն մեկ ժամը, որ նախատեսված է այս թեմայի ուսումնասիրման համար մեր կարծիքով անբավարար է: Զարմանալի է, որ 2014թ. լույս տեսած ուսուցչի ձեռնարկում նախատեսված է նաև ,, գործնական,, պարապմունք /բոլոր մանրամասները չենք ցիտի/: Հետաքրքիր է. Ինչպես պետք է ուսուցիչը կարողանա մեկ դասաժամի ընթացքում աշակերտին ծանոթացնել նոր նյութի հետ և, միաժամանակ, իրականացնել գործնական պարապմունք՝ այն էլ դաշտային պայմաններում: Ինչպես է դա հնարավոր: Մենք չենք կարող դա պատկերացնել: Իսկ հաջորդ թեման, գուցե, բաց թողնել, չանցնել: Իսկ չէ որ կա ծրագիրում, բա թեմպլանը: ,,Վերևներում,, բա-որ իմանան:

Թեմայի մասին կարելի շատ երկար գրել: Դա չէ մեր նպատակը: Մենք կարևորում ենք թեման ամբողջ ՆԶՊ ծրագրի մեջ և արժանին մատուցում այդ կարևորությանը: Այն ընդգրկված է այդ ծրագրում և պետք է լինի: Ավելի շատ կցանկանայինք անդրադառնալ առարկայի ամբողջական ծրագրին և դրա դասավանդման մեթոդաբանությանը: Մեր կարծիքով, ՆԶՊ առարկան, նույնիսկ հաշվի առնելով գոյություն ունեցող դասագրքերի վաղեմությունը և այսօրվա իրականությունից հեռու լինելը, անհրաժեշտ է սկսել դասավանդել հանրակրթական դպրոցում ավելի վաղ, ասենք 7-րդ դասարանից: Դա առանձին բանավեճի ու քննարկման թեմա է, իհարկե, բայց մենք ցանկանում ենք դա ընդգծել և հրավիրել այս հարցի վրա բոլոր շահագրգիռ կողմերի ուշադրությունը: Մենք հիմա այս հետազոտման մեջ չենք ցանկանում խորանալ այս հարցի մեջ, բայց որ այն արդիական է և անհրաժեշտ՝ չենք կարող անտեսել:

Մենք կցանկանայինք այստեղ նշել այն հիմնական, մեր կարծիքով, ժամանակի հրամայականին ոչ համահունչ այն թեմաները, որոնց անհրաժեշտությունը, կրկին ընդգծում ենք՝ **մեր կարծիքով,** պարտադիր չեն այդքան խորացված և մանրամասնած մատուցել աշակերտին:

1, Հաղթական ճակամարտերի թեման / 4 դաս/՝ զուտ պատմական փաստերի արձանագրությունից զատ տրվում է նաև տեղի ունեցած ռազմական ստրատեգիայի սխեմատիկ մեկնաբանությամբ: Դա թող ուսումնասիրեն ռազմական ուսումնարանների կուրսանտները, որոնք, որպես ապագա հրամանատարներ պարտավոր են դա իմանալ, որպեսզի պատեհ առիթի դեպքում կիրառեն այդ մարտավարությունը, որքանով այն համահունչ է այսօրվան և կրկնվում է /իսկ պատմությունը կրկնվում է, դա հայտնի է բոլորին/: Այս թեման աշակերտը ուսանում է նաև «Հայ ժողովրդի պատմություն» առարկայից: Առավել ևս հիմա, երբ այդ հաղթանակների շարքում ընդգրկված 1992թ. Շուշիի գրավումը, իր մեջ օրգանական կապ է առաջ բերում 2020թվականին այդ նույն Շուշին թշնամուն հանձնելու հետ: Այդպես եղել է միշտ: Այդպես հանձնվել է թշնամուն Կարսը: Պատմությունը կրկնվում է և դա այսօրվա սերնդի վրա ընկճող մեծ ազդեցություն է թողնում: Միայն պետք է ընդգծել հայրենասիրության «պակասը», քանզի Կարսում շատ հայրենասեր սպաներ ինքնասպան եղան, իրենց անհամաձայ-նությունը այդպես արտահայտելով հրամանատարական որոշման հետ: Դա սպայական պատվի արտահայտման ամենացուցադրական և սպառիչ արտահայտությունն է, իսկ սպայի պատիվը և ,,Հայրենիք,, արտահայտությունը անբաժանելի են եղել բոլոր ժամանակներում:

2, Մարտավարության հիմունքներում այսօր բացատրվում են այն մարտավարության առանձնահատկությունները, որ բնորոշ էին 2-րդ Համաշխարհային պատերազմին և նախկին խորհրդային բանակին; Դա արդիական չէ վաղուց, բայց ոչ մի նոր բան չի տրվում այսօրվա աշակերտին: Այսօրվա պատերազմը ունի նոր միջոցներ ու մարտավարություն, որի մասին գոնե մի քանի տողանոց շրջաբերական-հրահանգի ձևով ուսուցիչը չի ստանում, որպեսզի ,,թարմացնի,, այդ դասագրքերը: Նա հույսը դնում է միայն իր և համացանցի վրա: Դրա պատմական նշանակությունը կպարզվի հետագայում: Որպես հավելում մեր այս գաղափարի, ասենք որ մարտավարության հիմքում ընկած է ողջ մնալու և հաղթելու գացափարը, այսինքն՝ վերջնական արդյունքին հասնելու նպատակը: Դա է կարևորը:

3, Միթե այդքան անհրաժեշտ է շարային պատրաստությունը կամ էլ դրա առանձին մանրամասները:: Դա խորհրդային բանակի մնացուկներից է, որ գործում է ցայսօր: Միթե ուսուցիչը պետք է ցածր գնահատի այն աշակերտին, որը ճիշտ շի կատարում շարքի մեջ քայլելիս հրամանատարին ողջունելու հրամանը: Առավել ևս՝ աշակերտուհուն: Ծիծաղելի է: Զորակոչվածների ազատ ժամանակը ,,սպառվում է,, շարային պատրաստությամբ: Բայց դպրոցում դա գնահատելը մեր կարծիքով պետք չէ ուղղակի:

4, 1946 թվականից որպես անձնական զենք խորհրդային և ՀՀ Զինված ուժերում մնում է Կալաշնիկովի ինքնաձիգը: 70 տարուց ավելի ստեղծվել են նորերը և կատարելագործվել, իսի մենք դպրոցում միայն ԿԱ վրա ենք, քանդում հավաքում ենք ժամանակի վրա, վայրկյանը հաշվի առնելով, իսկ 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ մեր զինվորներից շատերին այն նույնիսկ պետք չեկավ, քանի որ պատերազմի արագությունը այնքան է մեծացել, որ շատերը չհասցրեցին այդ ինքնաձիքը գոծի դնել, ուղղակի չհասցրեցին: Իսկ դպրոցում մենք այդ նույն ինքնաձիգը շարունակում ենք քանդել-հավաքել: Սակայն նոր զինատեսակներից, անօդաչու թռչող սարքերի մասին ոչ մի տեղեկություն չունենք և դրանց մասին, հենց ինքնաձիգների նոր տարատեսակների, դրանց տեխնիկական հնարավորությունների մասին տվյալներ պետք է ,, հայթայթել,, համացանցից: Բա թեմպլանը, ծրագիրը: Ինչպես համատեղենք պարտադիր հինն ու անպետքը նորի ու անհրաժեշտի հետ: Սա էլ է տանում դեպի չարդարածված փակուղի ու անելանելիություն: Միշտ ուշանում ենք, իսկ նոր բան անելու համար միշտ մտածում ենք ,,բա վերևները որ իմանան,,.: Չէ որ գոյություն ունի դասագիրք:

5, Ռազմական տեղագրություն թեման պետք է ուսումնասիրվի ավելի մանրաասնորեն: Ընդհանրապես, մեր համոզամբ, աշխարհագրությունը դպրոցում մեղմ

ասված ,,հարգի,, չէ աշակերտների կողմից, որի հետևանքները շատ զոհերի պատ-ճառ դարձան 44-օրյա պատերազմի ընթացքում: Չցանկանալով այստեղ ծավալվել այս խնդրի շուրջ, ընդգծենք միայն, որ քարտեզ իմանալը, կարդալը, տեղանքում կողմնորոշվելը՝ այսօր շատ մեծ դեր ու նշանակություն ունի ժամանակակից մարդու կյանքում: Մեզանից շատերն են սիրում ճանապարհորդել, դա հիմա մեծ բյուրոկրա-տական քաշքշուկների հետ կապված չէ: Բայց համոզված լինել, որ դու արտերկրում չես հայտնվի այնպիսի իրավիճակում, երբ անհրաժեշտ է կողմնորոշվել ՝ և այն էլ շատ արագ, թե ինչ և ինչպես անել, ուր գնալ, անասկած հնարավոր չէ: Մարդիկ թեև դա դեռևս լրիվ չեն պատկերացնում, հասկանում և չեն ընդունում որպես իրականություն: Նրանցից շատերի կարծիքով նման բան իրենց հետ հնարավոր չէ, որ պատահի: Ցավալի անտարբերություն, որ կյանքի գին ունի:

6, Ավելի շատ ուշադրություն է պետք առանձնացնել բնածին և տեխնածին աղետների վրա, իմանալ դրանց պատճառները և պաշտպանական միջոցները՝ դրանցից փրկվելու համար: Այսպիսի աղետները լինում են առանց բացառության ամեն օր և որոնց զոհը դառնում են հազարավոր մարդիկ: Դա անտեսել չի կարելի: Անուշադրության մատնելը հանցագործության է համազոր: Մեր հանրապետության տարածքում հնարավոր են 100-ից ավելի բնական աղետներ, որոնցից ամենավտան-գավորը և ամենահավանականը երկրաշարժն է, իհարկե: Դրանցից պաշտպանվել է պետք իմանալ: Մեր հանրապետության տարածքում կան 100-ից ավելի ջրամբար-ներ, արդյունաբերական պոչամբարներ՝ գետերի վրա, որոնք տասնյակ տարիներ սպասում են վերանորոգման և մատնված են անուշադրության: Դրանցից շատերը չեն վերանորոգվել 50 տարուց ավելի: Սարսափել կարելի է: Իսկ ամենասարսափելին այն է, որ դրանք անուշադրության են մատնված իրականում, միայն ոչ թղթի վրա և հաշվետվություններում: Իսկ աշխարհի բազմաթիվ երկրներում տեղի են ունենում ամբարտակների փլուզումներ, որի հետևանքով նյութական ու մարդկային կորուստները անդառնալի են և ցավալի: Այդպիսի դեպքերի մենք ականատեսն ենք: Դրանք տեղի են ունենում նաև այնպիսի հարուստ ու զարգացած երկրներում, որպիսիք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Չինաստանը, Իտալիան, Հնդկաստանը, Ռուսաստանը: Մի քանի օր առաջ ականատես եղանք /11,09,23/ սարսափելի աղետին Լիբիայում, ուր ուժեղ անձրևների և փոթորկի հետևանքով մի քանի ժամում երկու ամբարտակների փլուզման արդյունքում, Լիբիայում զոհվեցին ավելի քան տաս հազար մարդ, իսկ ևս 10 հազարը անհայտ կորած են համարվում: Երկրի երեսից վերացել է Դերնա քաղաքի 25-30 տոկոսը: Ավերածությունների սրտաճմլիկ տեսապատկերը տեսանելի է նույնիսկ տիեզերքից արված լուսանկարներում: Միթե կա երաշխիք, որ նման աղետներ մեր հանրապետությունում չեն լինի: Իսկ Հայկական

ատոմակայանի գոյությունը ինքնին խոսում է այն մասին, որ մենք պետք է գիտենանք մեր անելիքը՝ հնարավոր վտանգի առաջացման ժամանակ: Վտանգը միշտ էլ կա:

7. Կարևորում ենք առաջին բուժօգնության հիմունքների ուսուցանումը: Կցանանայինք, որ այն ավելի մանրամասնվեր և խորը ուսումնասիրվեր, քանզի ներկա պայմաններում, բոլորին է հայտնի, թե որքան հիվանդությունների նախանշաններ ի հայտ են գալիս մանկական և պատանեկան տարիքում: Դա արդեն դառնում է գենոֆոնդի հարց: Իսկ մեր ազգը փոքրաթիվ է: Այդ մասին երբեք պետք չէ մոռանալ: Առաջին բուժօգնության տարրական կանոններն ու ձևերն ուսուցանելով աշակերտներին, մենք դրանով իսկ նպաստում ենք նրանց գոյատևելուն: Քանզի երբ մարդ կարողանում է, ընդունակ է փրկել սեփական կյանքը, ապա, այնուհետ, նա կկարողանա փրկել նաև ուրիշինը: Դա մեծ ձեռքբերում կարող է լինել մեր փոքրաթիվ ազգի համար:

Վերը նշվածի մասին կարելի է շատ գրել և բարձրաձայնել: Դրանից ոչինչ չի փոխվի, եթե չփոխվի վերաբերմունքը այս առարկայի և նրա կարևորության վերաբերյալ: Կցանկանայինք միայն համապատասխան անձանց ուշադրությունը հրավիրել այս հարցերի վրա, որ փորձեցինք ինչ-որ կերպ մեկնաբանել, քանզի նրանցից է կախված շատ հարցերի լուծումը: Դրա համար անհրաժեշտ է ունենալ ազգային, պետական մտածելակերպ: Ապագայի մասին հոգալը պետական մարմինների կարևորագույն պարտավորություններից մեկն է: Եվ դա միայն բնապահպանական ու տնտեսական հարցեր չեն, միայն ռազմական դոկտրինա ունենալը չէ: Այն ունի շատ ավելի լայնածավալ ու տասնամյակներ հետո գալիք ապագան կանխատեսելը և սպասվելիքը պատկերացնելը, սեփական հայրենիքի ապագան լավագույնս ապահովելը: Իզուր չէր Բիսմարկը ասում.«Ուզում ես իմանալ երկրի ապագան, ապա գնա դպրոց: Ապագան պետության այնտեղ է ստեղծվում»: Իսկ Բիսմարկը նա էր, ով կարողացավ պառակտված գերմանական հողերից վերամիավորել և կառուցել մի հզոր պետություն և ստեղծեց միասնական այդ պետություն, դառնալով այդ երկրի առաջին կանցլերը 19-րդ դարի կեսերին, որը մինչ այժմ ծաղկում ու զարգանում է Գերմանիա անունով, թեև պետք է նշել, հանուն պատմական ճշմարտության, որ հենց Գերմանիան է սանձազերծել է երկու համաշխարհային պատերազմները: Բայց դա մեր այսօրվա ուսումնասիրության թեման չէ: Կարևորը մեր՝ Հայաստանի Հանրապետություն կոչվող պետության գոյությունն է և ապագան: Պատմությունը պետք է իմանալ և չմոռանալ: Նա միշտ էլ համարվել է ամենալավ ուսուցիչը:

Եվ ամենակարևորը, որ մենք կուզինք առանձնացնել այս ուսումնասիրության մեջ: Մեր ամենացանկալի առաջարկությունն է, որ ոչինչ չասող «ՆԶՊ» հապա-

վումի փոխարեն օգտագործվեր «Պաշտպան Հայրենյաց» անվանումը: Մեր կարծիքով այն ամբողջովին ու համապարփակ արտահայտում է այն ամենը, ինչ մենք ցանկանում ենք, որ ունենա ՀՀ զինված ուժերի ապագա զինվորականը, ծառայողը: Նրա կրթական ու գիտակցական մակարդակից է կախված մեր բոլորի և հետագա սերուդների ապագան: Նրանք են, որ կորոշեն մեր հանրապետության ապագան, քանզի 20-25 տարի անց նրանք են լինելու երկրի ապագան որոշողները: Եվ մեր միակ ցանկությունն է ու հույսը, որ նրանց որոշումները կնպաստեն մեր Հայրենիքի բարգավաճմանն ու զարգացմանը, որ մեր հանրապետությունը կմնա այս մոլորակի վրա, ինչպես եղել է ավելի քան 5000 տարի: Սա է գերագույն նպատակը:

Օգտագործված գրականություն և մեդիա աղբյուրներ

1, Նախնական Զինվորական Պատրաստություն, Ուսուցչի ձեռնարկ, 8-9դաս; հեղինակներ. Վ. Օհանյան, Ս.Մարգարյան,Վ. Առաքելյան և ուրիշներ, ,,Աստղիկ գրատուն,, , Երևան 2014,:

2, Նախնական Զինվորական Պատրաստութուն, 8-րդ դասար., հեղինակներ Վ.Օհանյան, Ս. Մարգարյան, Վ. Առաքելյան և ուրիշներ, ,,Աստղիկ գրատուն,, Երևան 2014թ.,:

3, Նախնական Զինվորական Պատրաստություն, 9-րդ դաս., հեղ. Վ.Օհանյան, Ս. Մարգարյան, Վ. Առաքելյան և ուրիշներ, ,,Աստղիկ գրատուն,,, Երևան, 2009թ.:

Մեդիա աղբյուրներ .

4, «Վիկիպեդիա» ազատ հանրագիտարան,

5. https //www.icrs.org>focs.assts. files.

6. https//www.mfa.gob.by,polisi,

7. https//www.red gross.am.int…

8. https//auroraprize.com>detal

9. https//amedu.am>files>resources>files.